ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-21/6-Ա-1

ք. Երևան «02» Դեկտեմբեր 2021թ.

Ջրային կոմիտեն ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հայրապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 536-Ն որոշումը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Մ-9, Մ-1-Թալին-Քարակերտ-Թուրքիայի սահմանի կմ1+300-կմ3+600 (Թալինի բնակավայր) ճանապարհահատվածի վրա գտնվող ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն նախագծային փաստաթղթերի 450 օր:

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են (նախագծային փաստաթղթերում) պայմանագրի N 3.1 Հավելվածում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

4.1.1 Կապալառուն ներկայացնում է կատարողական փաստաթղթերի փաթեթը, որը պետք է կազմված լինի տեխնիկական հսկողություն և հեղինակային հսկողություն իրականացնող անձանց մասնակցությամբ:

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 102 708 000 (մեկ հարյուր երկու միլիոն յոթ հարյուր ութ հազար) ՀՀ դրամ, որից 17 118 000 (տասնյոթ միլիոն մեկ հարյուր տասնութ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում և կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ջրային կոմիտե	**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	«Էն Շին» ՍՊԸ
Հ/Հ 900011036184	ք. Երևան, Անտառային 170,
ՀՎՀՀ 02555816	հեռ. 099010111,
Կոմիտեի գլխավոր քարտուղարի	094179417
պարտականությունները	Արմսվիսբանկ ՓԲԸ
ժամանակավոր կատարող	Հ/Հ 25000106035001 00
	ՀՎՀՀ 02664949
	էլ. հասցե viktorkosyan@yahoo.com
_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ	---------- Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ. Տ.	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 04 » Դեկտեմբեր 2021թ. կնքված
ՋԿ–ՀՄԱԱՇՁԲ-21/6-Ա-1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Մ-9, Մ-1-ԹԱԼԻՆ-ՔԱՐԱԿԵՐՏ-ԹՈՒՐՔԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԻ ԿՄ1+300-ԿՄ3+600 (ԹԱԼԻՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ) ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Կցվում է

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ, ՔՈԹԱՆՅԱՆ, ԳԱՅԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

N	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը, հազ.դրամ	Ընդհանուր արժեքը, հազ.դրամ
1	2	3	4		6
1	Ջրամատակարարման բաշխիչ ցանց				
1	Ջրագիծ W1				
	Հողային աշխատանքներ				
1.1	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում էքսկավատորով կողլիցքով	մ3	631	0.705	444.6
1.2	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում՝ ձեռքով, կողլիցքով	մ3	34	2.889	98.2
1.3	Խրամուղու լրամշակում III կարգի գրունտներում՝ ձեռքով, կողլիցքով	մ3	19	3.466	65.8
1.4	V կարգի տուֆային գրունտների մշակում, բարձելով ինքնաթափերը և տեղափոխելով 3.0 կմ՝ աղբավայր	մ3	1933	2.425	4687.4
1.5	V կարգի տուֆային գրունտների մշակում հետահար մուրճով, բարձելով ինքնաթափերը և տեղափոխելով 3.0 կմ՝ աղբավայր	մ3	105	9.484	995.8
1.6	Խրամուղու լրամշակում V կարգի տուֆային գրունտներում՝ հետահար մուրճով, բարձելով ինքնաթափերը և տեղափոխելով 3.0 կմ՝ աղբավայր	մ3	60	11.201	672.1
1.7	Խողովակի նախապատրաստական շերտ ավազից տոփանումով, h=10 սմ	մ3	159	6.102	970.2
1.8	Խողովակի վրա ավազով պաշտպանիչ շերտի իրականացում՝ ապահովելով խողովակի վերին եզրից 0.2մ բարձրություն, տոփանումով	մ3	540	4.512	2436.5
1.9	Եռլիցք տեղի գրունտով բուլդոզերով, տոփանումով	մ3	269	0.431	115.9
1.10	Եռլիցք բերովի գրունտով բուլդոզերով, տոփանումով	մ3	1344	0.360	483.8
1.11	Խողովակի պաշտպանիչ ավազի շերտի վրա մասանակի եռլիցքի իրականացում ձեռքով տեղի փափուկ գրունտով 20սմ հաստությամբ, տոփանումով	մ3	415	1.471	610.3

	Խողովակային աշխատանքներ				
1.12	Պոլիէթիլենե խողովակ OD160, PN 10, փորձարկումով արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	902	6.520	5881.3
1.13	Պոլիէթիլենե խողովակ OD110, PN 10, արժեք, փորձարկումով մատակարարում և մոնտաժ	մ	339	3.744	1269.2
1.14	Պոլիէթիլենե խողովակ OD90, PN 10, փորձարկումով արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	1036	2.707	2804.7
1.15	Պոլիէթիլենե խողովակ OD50, PN 10, փորձարկումով արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	20	1.219	24.4
1.16	Պոլիէթիլենե խողովակ OD32, PN 16, փորձարկումով արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	8	0.889	7.1
1.17	Պողպատե խողովակակտոր D89x4.0, L=0.2մ, արժեք, մատակարարում և մոնտաժ հատ 1	մ	0.2	5.369	1.1
1.18	Պողպատե խողովակակտոր միակողմանի պարուրակով D26x2.5, L=0.2մ, արժեք, մատակարարում և մոնտաժ հատ 1	մ	0.2	0.923	0.2
1.19	Պոլիէթիլենե անկյուն 45° OD160, PN10. արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	4	21.736	86.9
1.20	Պոլիէթիլենե անկյուն 60° OD110, PN10. արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1	6.268	6.3
1.21	Պողպատե անկյուն 90° D57x3.5, արժեք, մատակարարում և մոնտաժ հատ 1	կգ	0.62	1.994	1.2
1.22	Պոլիէթիլենե եռաբաշխիկ-անցում OD160/50, PN10. արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	2	30.423	60.8
1.23	Պոլիէթիլենե եռաբաշխիկ-անցում OD110/90, PN10. արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1	15.492	15.5
1.24	Պողպատե կցաշուրթավոր եռաբաշխիկ-անցում DN150/80, PN10. արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	3	14.006	42.0
1.25	Պողպատե կցաշուրթավոր եռաբաշխիկ-անցում DN100/80, PN10. արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1	7.436	7.4
1.26	Պոլիէթիլենե անցում OD160/110, PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1	11.881	11.9
1.27	Պոլիէթիլենե անցում OD110/90, PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	3	6.336	19.0
1.28	Պողպատե կցաշուրթավոր անցում DN150/100, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1	58.976	59.0
1.29	Պողպատե անցում D89x4.5/57x3.5, արժեք, մատակարարում և մոնտաժ հատ 1	կգ	0.6	1.994	1.2
1.30	Պոլիէթիլենե կցամաս-անցում OD32-32, PN 16, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1	1.887	1.9

1.31	ճկուն կցորդիչ պոլիէթիլենե խողովակների միացման համար OD90 PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1	20.378	20.4
1.32	ճկուն կցորդիչ պոլիէթիլենե խողովակների միացման համար OD50 PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1	14.218	14.2
1.33	Պոլիէթիլենե փողակ-կցաշուրթ պողպատե ազատ կցաշուրթով OD160/DN150, PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	7	29.608	207.3
1.34	Պոլիէթիլենե փողակ-կցաշուրթ պողպատե ազատ կցաշուրթով OD110/DN100, PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	2	13.181	26.4
1.35	Պոլիէթիլենե փողակ-կցաշուրթ պողպատե ազատ կցաշուրթով OD90/DN80, PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	2	11.470	22.9
1.36	Պոլիէթիլենե փողակ-կցաշուրթ պողպատե ազատ կցաշուրթով OD50/DN50, PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	3	8.048	24.1
1.37	Պողպատե կցաշուրթ DN 80, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	3	7.172	21.5
1.38	Պողպատե կցաշուրթ DN 50, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	3	6.023	18.1
1.39	Թուջե սողնակ DN 50, PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	4	22.162	88.6
1.40	Կցաշուրթավոր ճկուն միացում ՊԷ խողովակների և սողնակների միացման համար DN80 PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	1	14.902	14.9
1.41	Կցաշուրթավոր ճկուն միացում ՊԷ խողովակների և սողնակների միացման համար DN50 PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	2	13.419	26.8
1.42	Ունիվերսալ կցաշուրթավոր ճկուն միացում պողպատե և/կամ թուջե խողովակների և սողնակների միացման համար DN50, PN10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	2	14.218	28.4
1.43	Ստորգետնյա հիդրանտ DN80, PN 10 արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	4	208.332	833.3
1.44	Խողովակաշարի լվացում ախտահանումով OD90-OD160, անհրաժեշտ նյութերի մատակարարումով	կմ	2.277	107.842	245.6
1.45	Խողովակաշարի լվացում ախտահանումով OD32-OD50 անհրաժեշտ նյութերի մատակարարումով	կմ	0.028	88.038	2.5
1.46	Պողպատե խողովակի կտրում DN100	տեղ	1	5.586	5.6
1.47	Պողպատե խողովակի կտրում DN50	տեղ	3	3.049	9.1

1.48	Պարուրակային արույրե DN32 փականի ապամոնտաժում և մոնտաժում՝ նոր կառուցվող դիտահորում	տեղ	1	5.089	5.1
1.49	DN80 թուջե սողնակի ապամոնտաժում և մոնտաժում՝ նոր կառուցվող դիտահորում	տեղ	1	3.294	3.3
1.50	DN80 ֆիլտրի ապամոնտաժում և մոնտաժում՝ նոր կառուցվող դիտահորում DN80	տեղ	1	3.294	3.3
1.51	DN80 ճնշման կարգավորիչի ապամոնտաժում և մոնտաժում՝ նոր կառուցվող դիտահորում	տեղ	1	3.294	3.3
	Բետոնային աշխատանքներ				
1.52	Ճանապարհային ծածկի սալ՝ D1500 դիտահորի համար (1 հատի բետոնի ծախսը՝0.85 մ^3, մետաղի ծախսը՝ 101.3կգ.), T տիպի թուջե մտոցով արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	5	128.336	641.7
1.53	Ճանապարհային ծածկի սալ՝ D1000 դիտահորի համար (1 հատի բետոնի ծախսը՝0.39 մ^3, մետաղի ծախսը՝ 87.93կգ.), T տիպի թուջե մտոցով արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	2	114.077	228.2
1.54	D1500, H=1500 հավաքովի երկաթբետոնե էլեմենտներից դիտահորի համար պատի օղակներ և հատակի սալ, (1 հատի բետոնի ծախսը՝ 0.96մ^3, մետաղի ծախսը՝ 66.9կգ), արժեք, մատակարարում և տեղադրում (ՁՀ - 4 ՀՀ - 1, 2, 3, 4)	հատ	5	251.116	1255.6
1.55	D1000, H=1500 հավաքովի երկաթբետոնե էլեմենտներից դիտահորի համար պատի օղակներ և հատակի սալ, (1 հատի բետոնի ծախսը՝ 0.58մ^3, մետաղի ծախսը՝ 29կգ), արժեք, մատակարարում և տեղադրում (ՁՀ - 2 ՁՀ - 3)	հատ	2	164.781	329.6
1.56	Մետաղական աստիճան 17.52 կգ մետաղի ծախսով, արժեք, մատակարարում և մոնտաժ հատ 7	կգ	123	0.855	105.2
1.57	Դիտահորերում սեյսմակայունության մետաղական կապող էլեմենտներ՝ արժեք, մատակարարում և մոնտաժ	կգ	208.32	0.941	196.0
1.58	Մետաղական էլեմենտների երկտակ ներկում ջրակայուն ներկով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ2	9.1	0.986	9.0
1.59	h=12սմ հաստությամբ խճի ենթաշերտ դիտահորերի տակ՝ անհրաժեշտ նյութերի արժեքով և մատակարարումով	մ3	2.84	9.866	28.0
1.6	Բետոնե հենարանների իրականացում անհրաժեշտ նյութերի մատակարարումով, B15 դասի բետոնով	մ3	0.144	72.562	10.4
1.61	Ժամանակավոր անցումների նախատեսում խրամուղու վրա տեղ 15	մ3	4.5	7.572	34.1
	Տնային միացումներ				
	Հողային աշխատանքներ				

1.62	Ասֆալտի և/կամ բետոնային շերտի կտրում սղոցով	մ	580	0.120	69.6
1.63	Ասֆալտի և/կամ բետոնե ծածկի քանդում մեխանիկական եղանակով (էքսկավատոր, պնևմատիկ կամ էլեկտրական մուրճ) կամ ձեռքով՝ հանված նյութի առանձնացումով, բարձելով ինքնաթափերին և տեղափոխում՝ 3.0կմ աղբավայր	մ3	42	2.426	101.9
1.64	Եզրաքարի ապամոնտաժում և առանձնացում հետագա օգտագործման համար	մ	95	1.155	109.7
1.65	Եզրաքարի ապամոնտաժում, բարձում ինքնաթափ և տեղափոխում աղբավայր՝ 3.0 կմ	մ	11	2.053	22.6
1.66	Ասֆալտ/բետոնի իրականացում մայթերում h=3 սմ, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարում	100մ^2	4.2	324.783	1364.1
1.67	Խճային հիմնատակի իրականացում մայթերում h =10սմ, ներառյալ նյութի արժեքը, մատակարարում, տեղադրումը և տոփանումը	100մ^3	4.2	171.644	720.9
1.68	Կրկին օգտագործման համար առանձնացված եզրաքարերի տեղադրում բետոնային հիմքով, ներառյալ բետոնի մատակարարումն ու տեղադրումը	մ	95	4.334	411.8
1.69	Նոր եզրաքարերի մատակարարում և տեղադրում բետոնային հիմքով, ներառյալ բետոնի մատակարարումն ու տեղադրումը	մ	11	12.461	137.1
1.70	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում էքսկավատորով կողլիցքով	մ3	177	0.705	124.7
1.71	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում՝ ձեռքով, կողլիցքով	մ3	10	2.889	28.9
1.72	Խրամուղու լրամշակում III կարգի գրունտներում՝ ձեռքով, կողլիցքով	մ3	6	3.466	20.8
1.73	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում էքսկավատորով կողլիցքով	մ3	56	0.914	51.2
1.74	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում՝ ձեռքով, կողլիցքով	մ3	3	5.094	15.3
1.75	Խրամուղու լրամշակում IV կարգի գրունտներում՝ ձեռքով, կողլիցքով	մ3	2	6.112	12.2
1.76	V կարգի տուֆային գրունտների մշակում, բարձելով ինքնաթափերը և տեղափոխելով 3.0 կմ՝ աղբավայր	մ3	770	2.425	1867.2
1.77	V կարգի տուֆային գրունտների մշակում հետահար մուրճով, բարձելով ինքնաթափերը և տեղափոխելով 3.0 կմ՝ աղբավայր	մ3	42	9.484	398.3
1.78	Խրամուղու լրամշակում V կարգի տուֆային գրունտներում՝ հետահար մուրճով, բարձելով ինքնաթափերը և տեղափոխելով 3.0 կմ՝ աղբավայր	մ3	24	11.201	268.8

1.79	Խողովակի նախապատրաստական շերտ ավազից տոփանումով, h=10 սմ	մ3	57	6.102	347.8
1.80	Խողովակի վրա ավազով պաշտպանիչ շերտի իրականացում՝ ապահովելով խողովակի վերին եզրից 0.2մ բարձրություն, տոփանումով	մ3	139	4.512	627.2
1.81	Եռլիցք տեղի գրունտով բուլդոզերով, տոփանումով	մ3	254	0.431	109.5
1.82	Եռլիցք բերովի գրունտով բուլդոզերով, տոփանումով	մ3	595	0.360	214.2
	Խողովակային աշխատանքներ				
1.83	Պոլիէթիլենե գոտի միացում OD160x1", PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	27	4.625	124.9
1.84	Պոլիէթիլենե գոտի միացում OD110x1", PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	4	4.284	17.1
1.85	Պոլիէթիլենե գոտի միացում OD90x1", PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	8	2.845	22.8
1.86	Պոլիէթիլենե գոտի միացում OD160x3/4", PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	20	4.625	92.5
1.87	Պոլիէթիլենե գոտի միացում OD110x3/4", PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	22	3.256	71.6
1.88	Պոլիէթիլենե գոտի միացում OD90x3/4", PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	25	3.256	81.4
1.89	Պոլիէթիլենե գոտի միացում OD32x3/4", PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	39	1.751	68.3
1.90	Պոլիէթիլենե անցում OD32/25 PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	39	2.706	105.5
1.91	Որձ միացում OD32x1", PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	39	1.673	65.3
1.92	Որձ միացում OD25x3/4", PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	251	1.673	420.0
1.93	Պարուրակային արույրե փական DN20, PN 10, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	145	4.918	713.1
1.94	Պոլիմերավազային ջրաչափական հոր, արժեք, մատակարարում և մոնտաժ	հատ	145	53.514	7759.6
1.95	Պոլիէթիլենե խողովակ OD32, PN 16, արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	195	0.889	173.3
1.96	Պոլիէթիլենե խողովակ OD25, PN 16, արժեք, մատակարարում և մոնտաժ	մ	625	0.889	555.6
1.97	Խողովակաշարի լվացում ախտահանումով OD25- OD32 անհրաժեշտ նյութերի մատակարարումով	կմ	0.82	88.038	72.2
	Ընդհամենը				**43711.4**
2	Կոյուղու ցանց				
	Հողային աշխատանքներ				

2.1	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում էքսկավատորով կողլիցքով	մ3	807	0.705	568.6
2.2	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում՝ ձեռքով, կողլիցքով	մ3	44	2.889	127.1
2.3	Խրամուղու լրամշակում III կարգի գրունտներում՝ ձեռքով, կողլիցքով	մ3	25	3.466	86.6
2.4	V կարգի տուֆային գրունտների մշակում, բարձելով ինքնաթափերը և տեղափոխելով 3.0 կմ՝ աղբավայր	մ3	1853	2.425	4493.5
2.5	V կարգի տուֆային գրունտների մշակում հետահար մուրճով, բարձելով ինքնաթափերը և տեղափոխելով 3.0 կմ՝ աղբավայր	մ3	101	9.484	957.9
2.6	Խրամուղու լրամշակում V կարգի տուֆային գրունտներում՝ հետահար մուրճով, բարձելով ինքնաթափերը և տեղափոխելով 3.0 կմ՝ աղբավայր	մ3	57	11.201	638.5
2.7	Խողովակի նախապատրաստական շերտ ավազից տուփանումով, h=10 սմ	մ3	171	6.102	1043.4
2.8	Խողովակի վրա ավազով պաշտպանիչ շերտի իրականացում՝ ապահովելով խողովակի վերին եզրից 0.2մ բարձրություն, տուփանումով	մ3	842	4.512	3799.1
2.9	Եռլիցք տեղի գրունտով բուլդոզերով, տուփանումով	մ3	876	0.431	377.6
2.10	Եռլիցք բերովի գրունտով բուլդոզերով, տուփանումով	մ3	789	0.360	284.0
	Տեխնոլոգիական մաս				
2.11	Երկշերտ, ծալքավոր լայնուկավոր խողովակ՝ PEHD OD300, արժեք, մատակարարում և մոնտաժ փորձարկումով	մ	1853	15.811	29298.2
2.12	Երկշերտ, ծալքավոր լայնուկավոր խողովակ՝ PEHD OD110, արժեք, մատակարարում և մոնտաժ փորձարկումով	մ	100	6.432	643.2
2.13	Գործող DN100 կոյուղագծերի կտրում	տեղ	200	5.586	1117.2
2.14	Գործող DN100 կոյուղագծերի ապամոնտաժում, բարձում ա/մեք, տեղափոխում աղբավայր մինչև 3կմ (տնային միացումների մասով)	մ	50	0.530	26.5
2.15	Գոյություն ունեցող ծածկի սալերի (ներառյալ մտոցը) ապամոնտաժում և տեղափոխում ջրմուղի պահեստ	հատ	49	6.291	308.3
2.16	D1000 հավաքովի երկաթբետոնե էլեմենտներից դիտահորի համար պատի օղակներ և հատակի սալ, (բետոնի ծախսը՝ 19,04մ³, մետաղի ծախսը՝ 1129կգ), արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	52	109.359	5686.7
2.17	Մետաղական աստիճան արժեքը, մատակարարումը և տեղադրում	կգ	547.16	0.855	468.0
2.18	Դիտահորերում սեյսմակայունության մետաղական կապող էլեմենտներ՝ երկտակ յուղաներկված. արժեքը,	կգ	747.52	0.941	703.3

2.19	Կոյուղու դիտահորի բետոնե առվակ B15 մակնիշի բետոնից՝ սվաղով և երկաթայնացումով	մ3	25.48	72.557	1848.8
2.20	Ճանապարհային ծածկի սալ՝ D1000 դիտահորի համար (1 հատի բետոնի ծախսը՝0.39 մ^3, մետաղի ծախսը՝ 87.93կգ.) T տիպի թուջե մտոցով, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	52	114.077	5932.0
2.21	h=12սմ հաստությամբ խճի ենթաշերտ դիտահորերի տակ՝ անհրաժեշտ նյութերի արժեքով և մատակարարումով	մ3	14.04	9.866	138.5
2.22	Ցեմենտի շաղախ	մ3	0.26	39.356	10.2
2.23	Պատերի աճեցման համար բետոն B15 մակնիշի բետոնից	մ3	2.667	72.557	193.5
2.24	Գոյություն ունեցող, շահագործումից հանվող դիտահորի լիցք բերովի ավազակոպճային գրունտով	մ3	51	4.288	218.7
2.25	Ժամանակավոր անցումների նախատեսում խրամուղու վրա տեղ 12	մ3	3.6	7.572	27.3
	Ընդհամենը				58996.6
	ԱԱՀ				17118.0
	Ընդհանուր				102708.0

Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ <<Շահույթը>>՝11% և ԱԱՀ-ն՝ 20%

* Կապալառուն աշխատանքները կատարում է Թալինի բնակավայր հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011036184
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Էն Շին» ՍՊԸ
ք. Երևան, Անտառային 170,
հեռ. 099010111,
094179417
Արմսվիսբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500010603500100
ՀՎՀՀ 02664949
էլ. հասցե viktorkosyan@yahoo.com

---------- Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
/ստորագրություն/

Հավելված թիվ 2
«04» նոյեմբեր 2021թ. կնքված
ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-21/6-Ա-1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
Մ-9, Մ-1-ԹԱԼԻՆ-ՔԱՐԱԿԵՐՏ-ԹՈՒՐՔԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԻ ԿՄ1+300-ԿՄ3+600 (ԹԱԼԻՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ) ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
(կողմերի կողմից համաձայնեցված)
կցվում է՝ ներկայացվում է նախագծային փաստաթղթերում

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը** օր	
		օր	Ավարտը
1	Նախապատրաստական աշխատանքներ	**30**	450 օր
2	Հողային աշխատանքներ	60	
3	Դիտահորերի տեղադրում	70	
4	Պոլիէթիլենե խողովակների տակ ավազե նախապատրաստական շերտի տեղադրում	80	
5	Պոլիէթիլենե խողովակների տեղադրում	80	
6	Պոլիէթիլենե խողովակի վրա ավազե նախապատրաստական շերտի տեղադրում	80	
7	Գրունտի հետլիցք / բացառելով շին. աղբը/	140	
8	Ասֆալտի վերականգնում	140	
9	Ջրագծի փորձարկում	30	
10	Բարեկարգման աշխատանքներ	160	
Ընդամենը		**450 օր**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011036184
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող
_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Էն Շին» ՍՊԸ
ք. Երևան, Անտառային 170,
հեռ. 099010111,
094179417
Արմսվիսբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500010603500100
ՀՎՀՀ 02664949
էլ. հասցե viktorkosyan@yahoo.com
Տնօրեն
_____ Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
/ստորագրություն/

Հավելված N 3
«04» նոյեմբեր 2021թ. կնքված
ՋԿ-ՀՄԱՇՁԲ-21/6-Ա-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների								
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231131/	Ջրամատակարարման խողովակաշարերի հետ կապված աշխատանքներ	54 354 000	54 354 000	102 708 000	102 708 000	102 708 000	102 708 000	102 708 000	102 708 000	**102 708 000**

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011036184
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Էն Շին» ՍՊԸ
ք. Երևան, Անտառային 170,
հեռ. 099010111,
094179417
Արմսվիսբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500010603500100
ՀՎՀՀ 02664949
էլ. հասցե viktorkosyan@yahoo.com
Տնօրեն

_____ Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
/ստորագրություն/

Հավելված N 3.1
«04» մայիսի 2021թ. կնքված
ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-21/6-Ա-1 ծածկագրով պայմանագրի

Մ-9, Մ-1-ԹԱԼԻՆ-ՔԱՐԱԿԵՐՏ-ԹՈՒՐՔԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԻ ԿՄ1+300-ԿՄ3+600 (ԹԱԼԻՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ) ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները համապատասխան նախագծային փաստաթղթերի

Վերականգնվող հատվածներ	*նվազագույն ժամկետ, տարի*	*Աղբյուրը և նորմատիվը*
Հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիա	30	Ըստ գրականության
Պոլիէթիլենե խողովակաշար, խողովակաամրաններով	50	ԳՕՍՏ ГОСТ 18599-2001
Երկշերտ, ծալքավոր լայնուկավոր խողովակ՝ PEHD	50	ԳՕՍՏ ГОСТ 18599-2001
Պողպատե խողովակաամրաններ	20-25	20-25 տարի ճիշտ շահագործման և պրոֆեսիոնալ մոնտաժի պայմաններում: Ըստ ինտերնատային տվյալների
Պոլիմերավազային հոր	30	Ըստ արտադրող կազմակերպության
Ասֆալտբետոնե ծածկ	5	Ըստ արտադրող կազմակերպության

Նյութի կամ կոնստրուկցիայի անվանումը	Համապատասխանեցման սերտիֆիկատի անհրաժեշտությունը	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի
Ցեմենտ	այո	1
Ավազ	այո	10
Խիճ	այո	10
Պողպատ	այո	50
Պոլիէթիլեն	այո	50
Բիտում	այո	5

Կապալառուն պարտավորվում է շինարարության ավարտից հետո հայտնաբերված թերությունների բացահայտման դեպքում անմիջապես ձեռնարկել դրանց վերացումը՝ վերակառուցման, վերանորոգման միջոցով:

Կապալառուի հետվարտական թերությունների վերացման ժամկետը սահմանվում է 1 տարի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011036184
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Էն Շին» ՍՊԸ
ք. Երևան, Անտառային 170,
հեռ. 099010111,
094179417
Արմսվիսբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500010603500100
ՀՎՀՀ 02664949
էլ. հասցե viktorkosyan@yahoo.com
Տնօրեն

---------- Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
/ստորագրություն/

Հավելված թիվ 4
« 04 » Դեկտեմբեր 2021թ. կնքված
ՔԿ-ՀՄԱՇՁԲ-21/6-Ա-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին:
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 04 » Դեկտեմբեր 2021թ. կնքված
ՋԿ–ՀՄԱՇՁԲ-21/6-Ա-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն